Թարգմանություն ռուսերենից · Քաղվածք՝ անվտանգության ցուցումներ և բնութագրեր · Տվյալները հորինված են

# ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ — Անվտանգություն (քաղվածք)

## 2. Անվտանգության ցուցումներ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ. ցանկացած տեխնիկական սպասարկումից առաջ լարազրկեք մեքենան և արգելափակեք գլխավոր անջատիչը «0» դիրքում: Այս պահանջի չկատարումը կարող է հանգեցնել ծանր վնասվածքների:
ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. մի՛ անգործունակացրեք պաշտպանական սարքերը: Պաշտպանական պատյանները (դիրք 3 և 5) աշխատանքի ընթացքում պետք է լինեն իրենց տեղում:
Օգտագործեք անհատական պաշտպանության միջոցներ՝ պաշտպանական ակնոցներ և լսողության պաշտպանության միջոցներ:

## 3. Տեխնիկական բնութագրեր

| | |
|---|---|
| **Սնման լարում** | 400 Վ, 3~, 50 Հց |
| **Տեղակայված հզորություն** | 7,5 կՎտ |
| **Աշխատանքային ճնշում** | 0,6–0,8 ՄՊա |
| **Աղմուկի մակարդակ** | ≤ 78 դԲ(Ա) 1 մ հեռավորության վրա |
| **Զանգված** | 1 250 կգ |
| **Շրջակա միջավայրի ջերմաստիճան** | +5…+40 °C |

Թարգմանական բյուրոյի նշում. ազդանշանային բառերը (ԶԳՈՒՇԱՑՈՒՄ, ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ) հետևում են ստանդարտացված աստիճանակարգությանը: Բաժինների համարակալումը համապատասխանում է բնագրին:

ПРИМЕР · ՕՐԻՆԱԿ

# Թարգմանության ճշգրտության վկայագիր

Թարգմանություն. Руководство по эксплуатации, раздел «Безопасность» — ռուսերենից հայերեն

Որպես www.techperevod.com տեխնիկական թարգմանությունների բյուրոյի լիազորված ներկայացուցիչ՝ սույնով հավաստիացնում եմ, որ վերոնշյալ փաստաթուղթը թարգմանվել է որակավորված և իրավասու պրոֆեսիոնալ թարգմանչի կողմից, ով վարժ տիրապետում է նշված լեզվային զույգի երկու լեզուներին։ Որքան մեզ հայտնի է, թարգմանված տեքստը ճշգրտորեն արտացոլում է բնագրի բովանդակությունը, իմաստը և ոճը և բոլոր առումներով հանդիսանում է սկզբնաղբյուր փաստաթղթի ամբողջական և ճշգրիտ թարգմանությունը։

Թարգմանության տեխնիկական խմբագրումն իրականացվել է համապատասխան ոլորտային իրավասություն ունեցող ինժեների կողմից։ Տերմինաբանությունը ստուգվել է հաճախորդի տերմինաբանական բազայի և կիրառելի ստանդարտների հիման վրա։

Սույն վկայագիրը վերաբերում է բացառապես թարգմանության ճշգրտությանը։ Մենք չենք երաշխավորում սկզբնաղբյուր փաստաթղթի իսկությունը կամ բովանդակությունը։ Թարգմանության պատճենը կցվում է սույն վկայագրին։

ՆՇՈՒՄ. սույն փաստաթուղթը ոչ պարտադրող ցուցադրական ՕՐԻՆԱԿ է և ոչ թե տրված վկայագիր։

Որակի բաժնի ղեկավար,
www.techperevod.com — ստորագրություն

Ամսաթիվ

ПРИМЕР · ՕՐԻՆԱԿ